ձգէր: *71* Յայնմ ժամանակի բազում պարգեւս եւ պատիւս եւ բազում գեւ-
ղեան զաւրավարին Մուշեղի Պապն[1] շնորհէր:

ԳԼՈՒԽ Ե.

1 Յաղագս միւսոյ պատերազմին Հայոց ընդ Պարս ի Գանձակ Ատրպայականի. եւ
վասն գուշակութեան Ուռնայրի, զի յայնմ եւս յաղթութիւն լինէր Հայոց գնդին:

2 Ապա լինէր գուշակ Մուշեղի Ուռնայր արքայ Աղուանից, յղէր առ նա
հրեշտակ եւ տայր նմա տեղեկութիւն. ասէր. Մեծ շնորհակալութիւն ունիմ
փոխանակ զի ոչ սպաներ դու զիս. եւ Աստուած էած զիս ի ձեռս քո, եւ դու
անխայեցեր. զայս սէր քո ոչ մոռացայց մինչեւ իցեմ ես: *3* Բայց գուշակեալ իմ
քեզ, զի Շապուհ թագաւորն Պարսից ամենայն զաւրաւք իւրովք կազմի գալ
անկանել յանպատրաստից իմն[2] ի վերայ քո: *4* Ապա ստրատն[3] Յունաց
կազմեաց զաւրս իւր՝ որ ընդ իւրով ձեռամբ էին, եւ խաղացոյց տանել գնալ ի
սահմանս Հայոց ի Գանձակէ կուսէ յԱտրպայական տանէ: *5* Սոյնպէս եւ Մու-
շեղ սպարապետն գումարեաց ի մի վայր զզաւրսն ամենայն Հայոց. եւ էին
կուռ վառեալք ինսուն հազարք ընդիրք նիզակ ի ձեռն, թող զսպարակիրս:
6 Եւ սոքա վաղագոյն ըստ գուշակութեանն աճապարեցին հասին յիւրեանց
սահմանն, բայց միայն թագաւորն մնաց անդէն ի Հայոց աշխարհին: *7* Եւ ե-
պիսկոպոսապետն Ներսէս անդէն մնայր յաշխարհին, եւ խնդրուածս առնէր
ընդ ամենայն աշխարհին հրամայէր[4] վասն զաւրացն որ էին ի պատերազ-
մին:

8 Իսկ թագաւորն Պարսից Շապուհ գայր հասանէր ամենայն զաւրաւքն
իւրովք ի տեղի պատերազմին, եւ գտանէր զզաւրսն Յունացն եւ զգունդն
Հայոց, զի կազմեալ պատրաստեալ էին ի գործ պատերազմին: *9* Եւ լինէին
խառնուրդք ճակատուն. ի պարտութիւն մատնեցան զաւրքն Պարսից:
10 Մանաւանդ գունդք նիզակաւորացն յարձակեալք մոլեգնեալք, քաջու-
թեամբ զախոյեանս ի վերուստ յերիվարացն յերկիր կործանէին յանդիման
թագաւորին Պարսից Շապհոյ. եւ ընդ ընկենուլն խրախոյս բառնային՝ աղա-
ղակելով ամենայն զաւրքն պատերազմիկք Հայոց, համակ զայս բանս ասե-
լով՝ եթէ Ա՛ռ Արշակ քաջ: *11* Զի զամենայն ախոյեանսն, զոր ի ճակատուն
յայն սպանանէին, նմա նուիրէին իւրեանց քաջի[5] թագաւորին Արշակայ. զի
զամենայն զոր սպանանէին, ասէին. Արշակայ թագաւորին մերոյ զոհ լիջիր:
12 Եւ յորժամ Հայոց ազատանոյն ախոյենացն նիզակաւորացն ռազմ արա-

1 *Օրինակ մի յաւելու՝* պարգեւէր եւ
2 *Յօր.* եկն
3 *Յերկուս օրինակս՝* ստրատելատն
4 *Օրինակ մի յաւելու՝* աղօթել
5 *Տպ.* առաջի